քը այցելելու։ Այնուհետև եպիսկոպոսը, իւր քահանայից հետ միասին շատ խնդրեցին դեսպաններին, որ նոքա իրանց կողմից բարեխօսեն խանի մօտ, որ սա թոյլ տայ վերջացնել սորանից քանի մի ժամանակ առաջ սկսած մի վանքի շինութիւնը, որ չգիտեմ ինչ պատճառաւ, Պարսիկները չեն թոյլ տալիս լրացնել։

Կէս օրին (յունվ. 6-ին) Հայքը խանի հրամանաւ, բերին մեզ 15 նժոյգներ, որոնց վերայ հեծած գնացինք մենք դէպի գետը, որ քաղաքի միւս կողմն է և մօտ կէս մղոն հեռու։

«Այս տեղ ժողովուել էին Հայք ահագին քանակութեամբ բոլոր շրջակայ գիւղերից և հետերնին ունենալով բազմաթիւ Խաչեր, սրբոց պատկերներ ու Խաչվառներ, հանդիսաւոր գնացք կատարեցին՝ երգեցողութեամբ և զանգակահարութեամբ։ Զուգընթաց այդ գնացքին հետևում էին բազմաթիւ պարսից զինուորներ, որպէս զի պաշտպանեն հայոց, եթէ մահմեդական դատարկաշրջիկ և ստորին ամբոխի կողմից որևէ անպատուութիւն պատճառուի. Խանը հրամայելէր, որ գետի միւս եզերքում, ուղիղ դէմ առ դէմ այնտեղին, ուր պիտի կատարուէր ջրօրհնեքը, պատրաստուի մի փառաւոր, ընդարձակ վրան, զարդարուած գորգերով և առ հասարակ պատրաստել դորա մէջ մի պատուաւոր ինջոյք կազմելու համար։ Միևնոյն ժամանակ տեսակ տեսակ խաղկատակներ և աչքակապներ Խանի հրամանաւ պիտի զուարճացնէին ամբոխին իրանց միմոսութեամբ։

Այդ վրանի մէջ, Խանի մօտ նրա աջ կողմը նստել էր Ռուսաց

---

դարխանու մեզ պատահած վարդապետին, ուղարկուած է այս կողմերը Հռոմայ Պապից՝ մի այլ պատրուակաւ, լոկ արևելեան եկեղեցիքը այցելելու։ Սակայն զի ոչ մի պատմութեան և աւանդութեան մէջ չէ յիշում թէ Հռոմայ Պապը ուղարկել է Հայոց և Աղուանից եկեղեցեաց այցելու եպիսկոպոս, իսկ թէ իբր ճանապարհորդ, անցել են նոքա Հայաստանովը դէպի Պարսկաստան, կամ մի ուրիշ նպատակաւ են եկել, ինչպէս Ունիթորների ժամանակ քանի լատին պատրիկները և այլ այսպիսիք, նոքա այցելու չեն կարող համարուել Հայոց եկեղեցւոյն, և ինչ հարկ կար։

Այս մասին չեմ ուզում երկար գրել, ցանկացողք թող կարդան մեր եկեղեցական և ազգային պատմութիւնքն, իսկ Կիլիկիայի մեր Ռուբէնեան կամ Լուսինեան թագաւորաց պատմութիւնը կարդացողք լաւ կարող են իմանալ, թէ Հռոմայ Պապի այցելու եպիսկոպոսները և դեսպանները (Քարտինալք) ինչ օգուտ են տուել Հայոց եկեղեցւոյն և ազգին։